

ՀԱՅԿ. ՍՍՐ ՄՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՅ ՀԱՐՏԱՐԱԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՇՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Управление по делам архитектуры при Совете Министров Арм. ССР
Комитет по охране исторических памятников

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

V

ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ
(ՈՒՂՂԵՑՈՒԹՅ)

Կազմից Ն. Եղիազարյան

ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЯНСКОЙ ССР

V

ИДЖЕВАНСКИЙ РАЙОН
(ПУТЕВОДИТЕЛЬ)

Составил О. Егиазарян

Հայկ. ՍՍՐ ՄՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՅ ՀԱՐՏԱՐԱԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
Издание Управл. по делам архитектуры при Совете Министров Арм. ССР

Ереван—1947 г.

902.6 (42925) 17500.

1-73 1/2 1/2 1/2 1/2

2 1/2 1/2 1/2 1/2 1/2

3 1/2 1/2 1/2 1/2

4 1/2

Sp

ՀԱՅԿ. ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Управление по делам архитектуры при Совете Министров Арм. ССР
Комитет по охране исторических памятников

902.6 (47.925)
.U-73

ՍՍՌԿԿՍԵ Է 1961 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

V

ԻՋԵՎԱՆԻ ՇՐՁԱՆ
(ՈՒՂՂԵՑՈՒՅՑ)

Կազմեց Հ. Եղիազարյան

ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЯНСКОЙ ССР

V

ИДЖЕВАНСКИЙ РАЙОН
(ПУТЕВОДИТЕЛЬ)

Составил О. Егиазарян



Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետության գործերի վարչ. հրատարակ.
издание Управл. по делам архитектуры при Совете Министров Арм. ССР

Ереван—1947 г.

44.560
A II
34592

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Իջեվանի շրջանի պատմական հուշարձանների «Ուղեցույցը» նպատակ ունի ծանոթացնելու շրջանի անցյալ կուլտուրայի մնացորդներին եվ օգնելու տուրիստական եվ էքսկուրսիոն խմբերին, որի համար տեքստը տրվում է նաև՛ ռուսերեն լեզվով:

«Ուղեցույցը» կազմված է երկու մասից՝ առաջին մասում, համեմատաբար մանրամասն նկարագրությամբ, ընդգրկված են Իջեվանի շրջանի նշանավոր հուշարձանները. երկրորդ մասում նշված են շրջանի մանր ու առանձին հուշարձանները՝ ցուցակի ձևով:

«Ուղեցույց»-ին կցվում են՝ ա) Համառոտ ակնարկ շրջանի պատմական անցյալի մասին, բ) Լուսանկարներ եվ գ) Շրջանի հնագիտական քարտեզը:

Կ Ա Ջ Մ Ո Ղ

S U M M A R Y

The following is a summary of the contents of the report. It is divided into two main parts: a general summary and a detailed summary. The general summary covers the overall findings and conclusions, while the detailed summary provides a more in-depth analysis of the data and the methods used. The report is organized into several sections, each dealing with a specific aspect of the study. The first section discusses the background and the objectives of the research. The second section describes the methodology and the data collection process. The third section presents the results of the study, and the fourth section discusses the implications and the conclusions drawn from the findings. The report is intended to provide a clear and concise overview of the research and its findings.

A B S T R A C T

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՏՐԿ

Դեռեւս ստույգ հայտնի չէ, թե Հայկական ՍՍՌ Իջեվանի ներկա շրջանը մինչև 5-րդ դարը Պատմական Հայաստանի որ նահանգի ել որ գավառի մասըն է կազմել: Արշակունիների իշխանության անկումից հետո, երբ Հայաստանը բաժանվում է երկու աշխարհակալ հզոր պետությունների՝ Պարսկաստանի ել Բյուզանդիայի միջև, Իջեվանի շրջանը կազմում էր Գուգարք նահանգի Կողբուի որ գավառի մի մասը: Այնուհետև գավառի սահմանները, ինչպես ել անունը, բազմիցս փոփոխության են ենթարկվել. այսպես օրինակ՝ արաբական տիրապետությունից հետո կոչվել է Կայենո գավառ կամ Սեվորդյաց երկիր, ապա՝ Աղստեմ գավառ, Ղազախ — Քարվանսարա, իսկ այժմ Իջեվան:

Շրջանի մի շարք գյուղերի — Իջեվան, Սեվքար, Աչաշուր, Վերին-Աղզան ել այլն — սահմաններում պատահաբար բացված դամբարաններից հանված հնագիտական իրերը հաստատում են, որ Իջեվանի շրջանում ելս բնակչությունը է եղել մեղանից մի քանի հազար տարի առաջ, ել որ այդ բնակիչներն ունեցել են բավական զարգացած կուլտուրա:

Իջեվանի շրջանի հնագույն ժամանակների այդ պատմական հուշարձանների շարքը պիտի դասել նաեւ այն բազմաթիւ օգտագործված բնական քարայրները, որոնք տարածվում են շրջանի խոր ձորերի ժայռոտ ափերին:

Հայտնի է, որ դեռեւս Արշակունիների ժամանակից, մանավանդ 4—5-րդ դարերից, Իջեվանի շրջանով անցել է միջազգային տարանցիկ առեւտրի ճանապարհներից մեկը:

Արաբական տիրապետության շրջանում Իջեվանը մտնում էր Գանձակի ամիրայության մեջ: Տվյալ ժամանակաշրջանին վերաբերող պատմական հուշարձանները հանդիսանում են այն մի շարք ամրոցները, որոնք կառուցել են շրջանի բնակիչները՝ իրենց ինքնուրույնությունը պահպանելու նպատակով: Այդ ամրոցներից հայտնի են Մանթաշ կամ Կարա-Կալա, Կրզ-Կալա, Բուդուրի ել այլն:

Արաբական տիրապետությունից հետո X—XIII դարերում, Բագրատունիների ել Զաքարյանների ժամանակ, կուլտուրան արագորեն զարգանում է նաեւ այս շրջանում: Ճարտարապետությունը, քանդակագործությունը, նկարչությունը, վիճազրույթությունը հասնում են բարձր կատարելության: Կառուցվում են մի շարք նշանավոր հուշարձաններ, ինչպիսիք են, օրինակ՝ Մակարավանքը, Դեկացնուտի, Սամսնի, Առաքելոց, Կիրանց վանքերը: Այդ հու-

շարձանները առատորեն զարդարվում են շքեղ քանդակներով եվ ծածկվում վիմական արձանագրություններով: Վերջիններս շատ կարեւոր վավերագրեր են հայ պատմագրության համար: Այդ խաղաղ պայմաններում սկսում են զարդանալ առեւտրական հարաբերությունները, վերստին գործում են հին ճանապարհները, իսկ գետերի վրա կառուցվում են կամուրջներ:

XIII դարից սկսած՝ թաթար-մոնղոլական արշավանքների հետեւանքով քայքայվում եւ ավերվում է նաեւ Իջեւանի շրջանը. խիստ տուժում են պատմական հուշարձանները, ժողովրդի մի մասը կոտորվում ու գերեւարվում է եւ շրջանի տնտեսական ու կուլտուրական կյանքը համարյա թե կանգ է առնում:

Այնուհետեւ Իջեւանին տիրում են պարսիկները. չնայած վերջիններիս բռնակալական ուժիմըն, այնուամենայնիւ սկսում են վերականգնվել գյուղերը, հիմնվում են նոր գյուղեր, համեմատաբար կայուն հունի մեջ է մտնում կյանքը, սակայն էկոնոմիկան եւ կուլտուրան նախկին թափով այլեւս չեն վերականգնվում Իջեւանի շրջանում մինչեւ 19-րդ դարը, երբ ուսական հաղթական բանակը ազատում է ամբողջ Անդրկովկասը արեւելյան բռնակալների ձանր լծից:

Ի Ջ Ե Վ Ա Ն

Իջեվանը համանուն շրջանի ամենահին եւ կենտրոնական գյուղերից մեկն է, որը գտնվում է Աղստեվ գետի ափին: Առեւտրական հին ճանապարհներից մեկն անցնում էր Աղստեվ գետի հովտով եւ այդ ճանապարհի վրա առեւտրական քարավանների համար կար իջեվան, որից եւ գյուղն ստացել է իր անունը: Հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ վերոհիշյալ իջեվանը եղել է Իջեվան գյուղից 10 կիլոմետր դեպի հարավ՝ Աղստեվ գետի ձախ ափին, որտեղ մինչեւ օրս պահպանվել են Իջեվանի բաղանիքի մընացորդները (տես նկար 1):

Մ Ա Ն Թ Ա Շ

Մանթաշ կամ Կարա-Կալա ամրոցը գտնվում է Իջեվան գյուղից մոտ 12 կիլոմետր դեպի հարավ - արեւելք, Աղստեվ գետի աջ ափին ձիթ բարձրացող լեռան գագաթին, կառուցված արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Սա Հայաստանի մեծ եւ անառիկ ամրոցներից մեկն է, ձգվում է լեռան գագաթի դուրս սարահարթերի վրա, որոնցից մեկը մոտ 50 մետրով բարձր է մյուսից: Բարձր մասը՝ միջնաբերդը շրջափակված է հաստ, բուրգավոր կրինապարիսպներով, ներսում նկատվում են բնակարանների հետքեր (նկար 2): Ամրոցն ունի երկու մուտք, որոնց դռները եղել են ամրոցը շակա մեծ քարերից: Ամրոցն այժմ ավերակ է, մնում են պարիսպների փոքրիկ մասերը միայն: Ներսում նկատվում են բազմաթիվ բնակարանների հետքեր: Պատմական տեղեկություններից ելնելով կարելի է ենթադրել, որ դա հենց պատմական Կայան-բերդը պետք է լինի:

Կ Ը Զ - Կ Ա Լ Ա (Աղշկա բերդ)

Կրգ-Կալա ամրոցը գտնվում է Իջեվան գյուղից մոտ 16 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք, անտառապատ սարի գագաթին: Լեռան գագաթի փոքր հարթությունը բոլոր կողմերից եզերվում է բնական ժայռոտ բարձր ափերով, միաժամանակ պաշտպանված է արհեստական, բուրգավոր պարիսպներով, ամրոցի մուտքը հարավից է. մուտքի մոտ, ներսի կողմից, կա փոքրիկ պահակատուն:

Ամրոցի ներսում ավերված բնակարաններից բացի կան երկու ջրամբար եւ խաչածեղի հատակազիծ ունեցող մի եկեղեցի: Զրամբարներից մեկը շատ մեծ է: Զուրը կավե խողովակով նախապես լցվել է մի փոքրիկ ավազանի մեջ, իսկ այստեղից էլ մի այլ խողովակով թափվել է այդ մեծ ջրամբարը:

Ամրոցի բոլոր շենքերը, ինչպես եւ պարիսպները կառուցված են կապտավուն բազալտ քարից, ամուր կրաշաղախով. այդ շենքերը ներկայումս գտնվում են կիսավեր վիճակում: Կրգ-Կալա ամրոցի պատմա-հնագիտական արժեքը բավականին մեծ է, որովհետեւ համեմատաբար լավ է պահպանվել նրա ամրոցականությունը:

Մակարավանքը գտնվում է Աշաշուր գյուղից մոտ 3 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք:

Աշաշուրը հիմնվել է 19-րդ դարում, բնակչությունը փոխադրվել է Հին-Աշաշուր գյուղից: Պատահական փորումների ժամանակ գտնված կավե ամանները, կարասները, խաղողի հնձանները ցույց են տալիս, որ Նոր-Աշաշուրի տեղը անցյալում բնակավայր է եղել: Նոր-Աշաշուրը հարուստ է պատմական հուշարձաններով, որոնցից նշանավոր է Մակարավանքը, որը կառուցված է սարի հյուսիսային լանջի մի հարթություն վրա՝ անտառի մեջ (նկ. 3):

Մակարավանքը Հայաստանի նշանավոր հուշարձաններից մեկն է. նրա ճարտարապետական կառուցվածքը, հարուստ միմադրությունը, բազմապիսի կենդանիների ել թռչունների քանդակները այդ հուշարձանը դարձնում են լուրջ ուշադրության արժանի մի օբեկտ:

Մակարավանքը խմբակային հուշարձան է. նա բաղկացած է իրար կից կառուցված երեք եկեղեցուց, մեկ ժամատնից, մեկ զանգակատնից ել երկու մատուռից: Վանքը պարսպապատ է, պարիսպների ներսում գտնվում են վանական միաբանության բնակելի ել այլ շենքերը: Հուշարձանի շուրջը տարածվում է Մակարավանք ընդարձակ գյուղատեղին ել դրան կից՝ մի մեծ գերեզմանատուն՝ խոշոր տապանաքարերով ել գեղաքանդակ խաչքարերով: Գլխավոր հուշարձանի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ: Պատշարձանի մասին աղբյուրները շատ աղոտ տեղեկություններ են հաղորդում այդ հուշարձանի մասին, սակայն ոճից երեւում է, որ այն կարող է կառուցված լինել 11—12-րդ դարերում: Գավթի դռան ճակատակալ քարի վրա եղած ՆԻԷ (978) թվակիր մի արձանագրությունից երեւում է, որ այդ հուշարձանի վայրում եղել են ավելի հին շենքեր:

Այս եկեղեցին բաղկան ընդարձակ սրահով, դմբեթավոր կառուցվածք է (նկ. 5): Բեմը երկու կողմից ունի երկհարկանի խորաններ, իսկ արեւմտյան մասի երկու խորշերից մեկը հետագայում պատով կտրել, դարձրել են կրկնահարկ խորան:

Բեմի արսիցքը զարդարված է 13 կիսաշրջան հատվածքի խորշերով, իսկ առաջամասը շարված է տարբեր ձևի կանաչավուն քարերով, որոնց համաժամանակ այդ քարերը ծածկված են շքեղ քանդակներով: Միատուն են՝ զգեստավորված մարդկանց բազմապիսի կենդանիների, թռչունների ել սողունների քարեկֆներ՝ բազմատեսակ ծաղիկների փնջահյուսերով միախառնված: Սա հուշարձանի ամենաուշագրավ մասերից մեկն է (նկ. նկ. 4, 5, 6, 7, 8, 9):

Հուշարձանի արեւելյան, հարավային ել հյուսիսային պատերի մեջ արտաակվում են բավական շքեղ զարդարված քանդակներով (նկ. նկ. 5, 7): Հյուսիսային կողմի խորշերը՝ ծածկվել են հետագայում կառուցված ժամատան պատով:

Հուշարձանն ունի երկու դուռ, որոնցից մեկը բացվում է արեւմտյան, իսկ մյուսը՝ հյուսիսային կողմից: Գլխավոր արեւմտյան դուռն ունի հարուստ պարակալ, իսկ ճակատը կազմված է կանաչ ել կարմիր գույնի ձևավոր քարերով (նկ. 11, 14):

Հուշարձանի յուրաքանչյուր պատի կենտրոնամասում բացվում է մի երկար ու նեղ լուսամուտ՝ զարդաքանդակ շքեղակալներով:

Հարավային պատի լուսամուտի տակ քանդակված է մի մեծ, գեղեցիկ արծիվ՝ գոհր (հավանաբար հորթ) ձանկերում. նույն լուսամուտի վերելում քանդակված է արեվի ժամացույցը (նկ. 12):

Գմբեթը արտաբուստ գլանաձևի է, 20 դուլգ կիսաշրջան սյուներով եվ չորս համաչափ լուսամուտներով, որոնք ունեն նույնաձևի շրջանակներ եվ պատած են բուսական շքեղ քանդակներով: Գմբեթի որմնասյուները միացնող կամարների տակ կան նաև կան վարդաձև քանդակներ:

Հուշարձանն ամբողջապես կառուցված է մուգ վարդագույն անդեզիտի մաքուր տաշած քարերից՝ կրաշաղխով: Ներսր սալահատակած է, տանիքը ծածկած խոշոր սալ քարերով:

Հուշարձանն այժմ էլ կանգուն է. քանդված է գմբեթի վեղարը եվ թմբուկից թափված են որոշ քարեր. թափված են նաև տանիքի քիվերը (կարնիզները), սալ քարերի մեծ մասը, ինչպես նաև հարավային ու արեվելյան պատերի արտաքին քարերի մի զգալի մասը: Հուշարձանը ենթարկված է մի շարք եվ հիմնական վերանորոգումների:

Վերջին վերանորոգումը կատարված է 1940 թվին Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից:

Ժամատուն — գտնվում է գլխավոր եկեղեցու շենքի հյուսիսային կողմում, նրան կից եվ շինվել է եկեղեցուց հետո: Ժամատունը կառուցված է նույն մուգ վարդագույն անդեզիտի մաքուր տաշած քարերից:

Ժամատունը քառակուսի է, ունի չորս քարե սյուն, որոնց բնբը քարե ամբողջական զլաններ են եվ ունեն մեծ խարիսխներ ու խոշակներ: Կենտրոնում, չորս սյուների վրա հանգչում է երթիկավոր, քարաշեն ծածկը: Առաստաղի մյուս մասերը մշակված են տարբեր ձևերով, որոնց անկյունները զարդարված են հարուստ քանդակներով (նկ. 13): Գմբեթի հիմքի մասում, առանձին քարերի վրա, զարդաքանդակների մեջ նկատվում են շենքը կառուցող վարպետների նշանները Ա, Մ, Գ, 3, Կ, Ո, Ա, Խ եվ այլն:

Ժամատան դռան երկու կողմերում, պատի տակ կան մեծ արտվանդաններ, որոնց խաչքարերն անհայտացած են: Ժամատան հարաջ-արեվելյան անկյունում կա կրկնաճարկ մի խորան, որի վերին հարկի համար շինված է 8 աստիճանով քարե սանդուխը (նկ. 14): Հյուսիս-արեվելյան անկյունում խոստանի փոխարեն կա մի ուրիշ շենք, որը մի դռնով հարողակցվում է ժամատան հետ: Այդ շենքը կառուցված է կաթնագույն հանքաքարի բարակ սալ քարերով եվ ունի կամարակապ ծածկ: Հարավային կողմից պատ շունի, այլ հենվում է հին եկեղեցու շենքի հյուսիսային պատին: Արեվելյան պատի մեջ հենի մեծ օջախ: Այդ մասը հավանաբար եղել է վանքի նշխարատունը: Պատի մեջ օգտագործված են քանդակազարդ խաչքարերի բեկորներ:

Բացի երեք դռներից, որոնցով ժամատունը հարողակցվում է երկու եկեղեցիների եվ նշխարատան հետ, մի մուտք էլ կա արեվմուտան կողմից: Դռան շրջանակից վերելվ, հարավային եզրին քանդակված է առյուծի բարեկեփ՝ մարդու կերպարանքով — թագակիր, իսկ հյուսիսային եզրին քանդակված է նույնպես առյուծ, որն իր թաթերի մեջ է առել մի եղ (նկ. 15):

Հուշարձանն ունի հինգ լուսամուտ, երեք արեվմուտան եվ երկուսը հյուսիսային կողմից: Լուսամուտներն ունեն քանդակազարդ պսակներ: Արեվմուտան պատի հարավային կողմի լուսամուտի պսակի թեվերի վրա փորված են երկու աղավախների բարձրաքանդակներ (նկ. 10):

Թեպետ հուշարձանը կանգուն է, բայց գտնվում է խարխուլ վիճակում: Սա իր ամբողջության մեջ — ներգաշնակ կատարումով, նուրբ դույներով եվ աննման, ճոխ քանդակներով — հիասթափող տպավորություն է թողնում դիտողի վրա:

Երկրորդ եկեղեցին Մակարավանքի ամենահին հուշարձանն է, որը պատմական աղբյուրներում չի հիշատակվում, բայց իր կառուցման ոճով պատկանում է 10-րդ դարին: Կենտրոնական գմբեթային սիստեմի կառուցվածք է, արտաքուստ ուղղանկյուն-քառակողմ, իսկ ներքուստ՝ խաչաձևով հատակագծով: Խաչքիվերը միանում են կամարներով, որոնց վրա հանգում է գլանաձևով թմբուկ ունեցող գմբեթը:

Հուշարձանը յուրաքանչյուր անկյունում ունի մեկ խորան: Մուտքի միակ դուռն արեվմտյան կողմից է եվ բացվում է գավթի մեջ: Արեվելյան կողմից ունի արսիդ՝ մեծաղբյուր բեմով եվ վեմ—բարով: Բեմի առաջամասի շարվածքը պատած է բուսական եվ ցանցաձևով հյուսվածքի շքեղ քանդակներով:

Յուրաքանչյուր խաչքիվից բացվում է մեկական քանդակազարդ լուսամուտ: Դրան համապատասխան՝ մեկական լուսամուտ էլ բացվում է գմբեթի յուրաքանչյուր կողմից: Հատակը հողից է, իսկ տանիքը պատած է սալ քարերով:

Հուշարձանը կառուցված է կիսատաշ կարմրավուն տուֆ քարից: Հուշարձանը ենթարկված է հիմնական վերանորոգման, որի ընթացքում տանիքը եվ գմբեթն ամբողջապես փոխված են: Վերջիններս կառուցված են նույն հանքաքարի մաքուր տաշված քարերից:

Աստվածածին եկեղեցին գտնվում է գլխավոր եկեղեցու արեվելյան կողմում. այն կառուցել է վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը 1198 թվականին: Այս շատ փոքրիկ շենքը, որ հիշեցնում է Անիի Ապուղամբինց եկեղեցին, կառուցված է մուգ վարդագույն անդեզիտի սրբատաշ քարերից: Արտաքուստ ստորին մասում շրջանաձևով է, վերելում՝ ութկողանի, իսկ ներքուստ խաչաձևով: Արեվմտյան խաչքիվն ուղղանկյուն է, իսկ մյուս խաչքիվերը՝ կիսաշրջանաձևով: Խաչքիվերի անկյուններից ձգվում են կիսաղանաձևով, բարակ որմնասյուներ, որոնք իրար հետ միանում են կամարներով, իրենց վրա կրելով փոքրիկ գմբեթը. վերջինիս թմբուկը գլանաձևով է, բարձր, սրածայր վեղարով (նկ. 16):

Յուրաքանչյուր խաչքիվի կենտրոնից բացվում են մի-մի լուսամուտ, իսկ դրանց արանքներում, արտաքուստ կան մեկական խորշեր, որոնց կամարակապ դափաթը զարդարված է քանդակներով: Բոլոր լուսամուտներն էլ ունեն նուրբ քանդակներով զարդարված պսակներ:

Հուշարձանը խիստ բնորոշ է իր բարձրաքանդակներով. հյուսիսային կողմի լուսամուտի վերելում քանդակված է մի արագիլ, որը կոտցով բերանել է օձի կոկորդիցի, իսկ վերջինս իր մարմնի մնացած մասով փաթաթվել է արար հետ կովոզ երկու կենդանիներ:

Հուշարձանը սարահատակած է, տանիքը եվ ծածկված է սալ քարերով, արեվելյան կողմից ունի արսիդ՝ շատ փոքր բեմով ու վիմաբարով. հուշարձանը կանգուն է եվ ամբողջական (նկ. 16, 17, 18):

ՄԱՍՈՒՆՆԵՐ գտնվում է Աստվածածին եկեղեցու շենքի հյուսիսային կողմում. կառուցված է տաշած քարերից. ունի թղակապ տանիք: Արեվելյան ձևով ճակատակալ քարով: Դռան երկու կողքերին դրված են ամբողջական մեծ վրա օգտագործված են քանդակազարդ խաչքարեր եվ այլ բեկորներ: Մակարավանք ցանկապատված է մեծ պտրիսպով, որը հիմնովին աճեցրակ է. կանգուն է գլխավոր մուտքի դուռը, որը շարված է մաքուր տաշած քարերից, կամարակապ եվ արտաքուստ կիսաղանաձևով շրջակայններով: Պարիսպների ներսը պահպանվել են վանական միաբանության ընդարձակ բը-

նակարանների ավերակները. դրանք կառուցվել են տեղական լեռնաքարից — կրաշաղախով: Խմելու ջուրը կալե խողովակներով բերված է արեվմտյան կողմի անտառապատ սարից. ջրմուղի սկզբնավորման կետում, սարի վրա դեռ պահպանվում է ջրի ավազանը. պատահական փորումների ժամանակ դուրս են գալիս ջրմուղի խողովակները: Հուշարձանի բակում, հարավ - արեվմտյան անկյունում, պահպանվել է նաեւ ջուրն ընդունող ավազանը՝ ավերակ վիճակում:

Հուշարձանի շուրջը տարածվում է Մակարավանք ավերակ գյուղատեղին, որի բունած ընդարձակ տարածությունը եւլ բնակարանների մեծությունը վկայում են, որ նա մի ժամանակ եղել է կենտրոնական վայր եւլ ունեցեղ է տնտեսական բարգաւաճ վիճակ: Այդ են ապացուցում նաեւ գյուղատեղում եղած ընդարձակ գերեզմանոցի բազմաթիւ մեծ եւլ գեղաքանդակ քարերը:

Մակարավանք հարուստ է վիմական արձանագրություններով, որոնք մեծ մասամբ նվիրատուական են եւլ վերաբերում են 12—13 դարերին: Այդ նվիրատուությունների ծավալը ցույց է տալիս, որ Մակարավանքը այդ դարերում եղել է բարգաւաճ վիճակում եւլ հասել է իր ծաղկման գագաթնակետին:

14-րդ դարից սկսած Մակարավանքի մասին այլեւս հիշատակություններ չկան. անհավանական չէ, որ մոնղոլ-թաթարական արշավանքներն ամալույթյան հասցրին նաեւ այս հուշարձանը:

ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ

Առաքելոց վանքը գտնվում է Գետաշեն (նախկին Կունեն) գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի արեւմուտք:

Գետաշենը հիմնվել է 19-րդ դարի վերջերին. բնակիչներն այնտեղ են եկել Հին-Կունեն գյուղից եւլ մասամբ էլ շրջանի այլ գյուղերից: Հին-Կունեն գյուղատեղը տարածվում է Կունենազետ կոչված վտակի երկու կողմերում, որն իր ակունքներում կոչվում է Կիրանց - ջուր:

Հին - Կունեն գյուղը, ըստ նյութական մնացորդների, վերահիմնվել է 17-րդ դարի սկզբներին եւլ բունել է բավական ընդարձակ տարածություն:

Գյուղատեղում պահպանվել են երկու մեծ եկեղեցիներ, որոնք շինված են տեղական անտառ քարից՝ կրաշաղախով: Դրանցից մեկը գտնվում է վրտակի աջ ափի թաղամասում եւլ կոչվում է Աստվածածին: Այս եկեղեցին հարավային կողմից ունեցել է սրահ, որը սակայն հիմնովին ավերված է: Հուշարձանը կառուցել են Մելիք-Շահնազար եւլ Խան-զադե ամուսինները 1675 թվականին, կառուցողն է վարպետ Հակոբը, որը թողել է արձանագրություն դուռն ճակատակալ քարի վրա: Եկեղեցու շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանոց, որը հարուստ է խաչքարերով եւլ տապանաքարերով: Խաչքարերը դարդարված են շքեղ քանդակներով, իսկ տապանաքարերը կենցաղային ու սրբապատկերների բարձրաքանդակներով (նկ. 19): Տապանքարերի ու խաչքարերի մի մասն ունեն 13 եւլ 17—19-րդ դարերի արձանագրություններ. այդ ցույց է տալիս, որ Կունեն գյուղն ավերվել է մոնղոլական արշավանքների ժամանակ եւլ վերականգնվել 17-րդ դարում:

Մյուս եկեղեցին, այժմ ավերակ վիճակում, գտնվում է վտակի ձախ ափի թաղամասում: Սրանից մնացել է միայն արաբիի մասը: Այստեղից դեպի արեւմուտք գտնվում են մի այլ գերեզմանոցի մնացորդներ:

1. Առաքելոց վանքը գտնվում է Կունեն վտակի ձախ ափին՝ փոքրեկ բարձունքի վրա: Խմբական հուշարձան է՝ բաղկացած երկու եկեղեցուց, մեկ ժամատանից եւլ մի շարք օժանդակ շենքերից: Առաքելոց վանքը շրջապատված է բարձր, բրգավոր պարիսպներով, որոնք շարված են խոշոր լեռնաքարերից—

կրաշաղախում: Գլխավոր մուտքը հարավ-արեւելիցն անկյունից է, մի փոքր մուտք էլ ունի արեւմտյան կողմից:

Գլխավոր եկեղեցին գտնվում է սարահարթի ամենահյուսիսային եզրին եւլ եկեղեցու հյուսիսային պատը հանդիսանում է պարսպի մասը: Հուշարձանը զմբեթավոր կառուցվածք է, հիմնված շորս որմնասյուների վրա, որոնք կամարներով միմյանց հետ միանալով, իրենց վրա կրում են գլանաձեւ թմբուկով, սրածայր, բարձր վեղար ունեցող զմբեթը (նկ. 21): Ծեփքը շարված է գունավոր հանքաքարերից, որոնք արտաքուստ սրբատաշ են, իսկ ներսից փոքր ինչ հարթած: Բնքը բարձրադիր է, առանց կտրանների: Միակ դուռն է արեւմտյան կողմից է, որը բացվում է ժամատան մեջ: Հուշարձանը կանգուն է, ներսից սվաղած է կրաշաղախով, որ մեծ մասամբ թափված է. մնացած մասերի վրա նկատելի են որմնանկարների հետքեր:

Ժամատունը գտնվում է գլխավոր եկեղեցուն կից, սրա արեւմտյան կողմում. կառուցված է միեկնույն ձեւով: Ծեփքի ծածկը հանդում է իրար դեմ ուղղահայաց բարձրացող՝ երկու զույգ խաչաձեւով կամարների վրա, որոնք մի ծայրը հեկվում է որմնասյուներից, մյուս ծայրը՝ կառուցակներից (կրոնշանակներին) եւ ուշագրավ են իրենց նրբությամբ, որ առավել շեշտվում են ընդհանուր կոպիտ ֆոնի վրա (նկ. 22):

Դուռը հարավային կողմից է. դռան առջեւ եղել է զանգակատուն, որն այժմ հիմնովին ավերված է. մնում են միայն արեւմտյան պատի ստորին մասերը:

Շատ բնորոշ է ժամատան ծածկի կենտրոնը, որը լուծված է գլուղական տների հազարաշեն կոշվող երդիկների ձեւով, բայց այն մեծ եւլ հեղաշրջող տարբերություններ, որ այստեղ հաղարաշենի փայտը լրիվ փոխարինված է մեծ ու երկար սալ քարերով: Այս օրինակը միաժամանակ ցույց է տալիս հայկական ճարտարապետությանը հատուկ փայլուն ձեւերից մեկի՝ բարե-երդիկավոր այս շենքերի ծածկի հրաշագործ կատարելությունը: Եւլ պատահական չէ աշխարհամասերը երկար ժամանակ ունեցել են զերազանցորեն աշխարհիկ ֆունկցիան (նկ. 23): Տանիքը պատած է սալաքարերով. հատակին կան մի քանի զերեղաքարաքին երեսի եւլ զանգակատան մնացորդների վրա կան 13-րդ դարի վիկառուցված պիտի լինեն մինչեւ 13-րդ դարը:

Ս. Կարապետ Խաչատրյանը գտնվում է գլխավոր եկեղեցու հարավային պատի տակ. պատվանդանն ամբողջական ավազաքարից է, ցածր, իսկ խաչակներով զարդարված. ունի զրավոր ընդարձակ հիշատակություններ, որոնց նըվում է սարահարթի հարավային մասում. պարզ թաղակալ շենքը զբառանիքով: Պատերը շատ հաստ են ու բարձր, երկուսական որմնասյուներն ինք խորաններ չունի, որի պատճառով արտիզի մասը լսիտ լայն է, այնպես որ կիսաշրջան չի կազմում: Այս հուշարձանն իր կառուցման ոճով նման է Սարահարթի ամենահարավային ծայրում, սարիսպների ներքը կան խոձին թաղակալ մեծ շենքեր: Հավանական է, որ դրանք ծառայել են որպես վերջին զարերի եկեղեցական շենքերին:

Սարահարթի ամենահարավային ծայրում, սարիսպների ներքը կան խոձին թաղակալ մեծ շենքեր: Հավանական է, որ դրանք ծառայել են որպես վանքի ամբարներ: Պարիսպների ներքը կան մի շարք սլ փոքրիկ շենքեր, ո-

րոնք երեւի բնակարաններ են եղել. վերջիններս ավերակ են, մնացել են միայն նրանց հիմնապատերը:

2. Առաքելոց գյուղատեղին տարածվում է Առաքելոց վանքի շուրջը եւլ բռնում է բավականին մեծ տարածություն: Սովետական Հայաստանի տերիտորիայում գտնվող ավերակ գյուղատեղիներից շատ քչերն են իրենց ներքին ամբողջականությունը պահպանել այնպես, ինչպես Առաքելոց գյուղատեղին: Նա իր դարաշրջանի (10—13-րդ դ.) հայ գյուղի կամ գյուղաքաղաքի բնորոշ տիպարն է: Այդ իսկ տեսակետից, Առաքելոց գյուղատեղի պատմահնագիտական արժեքը բավականին մեծ է. այդ մասին են վկայում տեղում գտնվող քարանասարան, բաղանիքը, վանքը, եկեղեցիների ավերակները և այլն:

Գյուղատեղին տարածվում է Կունեն վտակի երկու ափերին եւլ պատած է խիտ անտառով: Գյուղատեղում պահպանվել են հին եկեղեցիների շենքեր, որոնք տարբեր մեծություն ունեն եւլ կառուցված են տեղական քարից. արտաքին կողմերից փոքր ինչ հարթված են: Եկեղեցիներից մեկը կոչվում է Թեմավոր վանք, որի բեմը համեմատաբար լայն է ու ցածր: Մյուս շրջ եկեղեցիներից երկուսն ունեն արձանադրություններ. այդ արձանադրություններից երեկում է, որ եկեղեցիներից մեկը կառուցվել է 1276 թվականին—Գրիգոր քահանայի կողմից, իսկ մյուսը՝ 1274 թվականին — Ավետիս եւլ Մլքան ամուսինների կողմից: Մյուս եկեղեցիներն արձանադրություններ չունեն, բայց, անշուշտ դրանք եւլս պատկանում են 12—13-րդ դարերին: Բոլոր եկեղեցիներն էլ գտնվում են ավերակ վիճակում:

Գյուղատեղի արեւմտյան թաղամասում տարածվում է բնդարձակ զենքամասոց, որտեղ կան բազմաթիւ խաչքարեր ու պատվանդաններ: Գերեզմանոցի հյուսիս — արեւմտյան եզրին կա մի քանդակազարդ խաչարձան, որին աղղացիք Թեմավոր խաչ են ասում. վերջինս երկու խաչքարից է, որոնցից մեկն ունի երեք կարգ պատվանդան, իսկ մյուսը՝ մեկ ամբողջական պատվանդան եւլ Թեմավոր խաչքար: Թեմավոր խաչքարի վրայի եղծված արձանադրության համաձայն այդ հուշարձանը կառուցված է 1289 թվականին:

Հետաքրքրական է գյուղատեղում գտնվող բաղանիքի ավերակ շենքը. սա կառուցված է թրձած աղյուսից — ամուր կրաշաղխով, բաղկացած է մի շարք բաժիններից, որոնց հիմնապատերն են միայն մնում եւլ երկու փոքր սենյակների մասերը: Զուրը կա մե խողովակներով բերել են հյուսիսային կողմի լեռան ժայռոտ լանջերից բխող աղբյուրներից: Կա մե խողովակների մասերը դեռ մնում են բաղանիքի պատերի մնջ՝ հորիզոնական եւլ ուղղաձիգ դիրքով:

Ուշագրավ է նաեւ քարվանսարան, որը գտնվում է Առաքելոց գյուղատեղի արեւելյան եզրին: Դա բաղկացած է մի քանի շենքերից, որոնցից ամենաբնորոշը գտն է. վերջինս ձգվում է արեւելքից — արեւմուտք. բավականին ընդարձակ շենք է, ցածր ու լայն պատերով, կամարակապ տանիքով: Կարճ որմնասյուները տալիս են որմնակամարներ, որոնք պատերի մեջ կազմում են խորշեր: Խորշերից գատ, պատերի մեջ կան խոր պահարաններ Մուսթն արեւմտյան կողմից է՝ դարպասաձեւ եւլ ճակատակալ ամբողջական մի քարով: Տեղադրք այդ հուշարձանն անվանում են Զիթհան: Հավանորեն հետադրյում այն օգտագործվել է որպես ձիթհան:

Այդ հուշարձանի հյուսիսային կողմում ընկած են քարվանսարալի բնակելի շենքերը: մի ընդարձակ դահլիճ, որը նույնպես ձգվում է արեւելքից — արեւմուտք, պատերը հաստ են ու բարձր, արեւելյան կողմից ունի երեք մեծ լուսամուտ, հարավային կողմից՝ մեկ դուռ. հավանական է, որ շենքը եղել է փայտածածկ:

Հյուսիսային կողմից երկու դռներ տանում են դեպի երկու ուրիշ բնակարաններ, որոնք համեմատաբար փոքր են եվ որոնց պատերի ստորին մասերն են միայն պահպանվել: Բոլոր շենքերն էլ կառուցված են նույն քարից, ինչպես գումբ:

Մրանցի կամուրջը — Առաքելոց գյուղատեղի հուշարձաններից նըշանավոր է նաև՛ այս կամուրջը. սա գտնվում է Կիրանց վտակի վրա: Կամուրջը կառուցված է ավազաքարի խոշոր տաշած քարերից — ամուր կրաշաղախով, մի լայն կամարով, որի խելերը հենվում են վտակի ափերի խոշոր ժայռերին: Կամուրջը կառուցված է նույն ժամանակում եվ այժմ էլ կանգուն է (նկ. 20):

Առաքելոց գյուղատեղի այն թաղամասում, որը գտնվում է վտակի աջ ափին, կամրջին մոտիկ կա մի փոքրիկ շենք. այդ շենքը կառուցված է մասամբ թրծած աղյուսից եվ մասամբ էլ՝ աղյուսաձեղ մանր քարերից — կրաշաղախով, քառակուսի հատակագծով: Պատերի անկյուններում, ներսից կան վեղարածնիվ խորշեր: Շենքը կամրջի մոտ գտնվելը, ինչպես եվ գյուղատեղում քարվանսարա լինելը ենթադրել են տալիս, որ այդ շենքը կամ պատկանում, եղած լինի՝ կամ թե կամրջով անցնող քարավաններից հարկ հավաքելու կայան:

Կ Ի Բ Ա Ն 3 Վ Ա Ն Բ

Կիրանց վանքը Պատմական Հայաստանի հետաքրքիր հուշարձաններից է, նրա եղակի աղյուսաշեն կառույցներից մեկը: Գտնվում է Գետաշեն գյուղից մոտ 12 կիլոմետր դեպի արևմուտք, Կիրանց - ջուր վտակի ձախ ափին ընկած հարթության վրա: Խմբական հուշարձան է, բաղկացած 3 եկեղեցուց, մեկ սեղանատնից եվ մի շարք օժանդակ շենքերից (նկ. 25):

Գլխավոր եկեղեցին կառուցված է թրծած աղյուսից, իսկ հիմնապատերը՝ մուգ վարդագույն սրբատաշ քարից: Եկեղեցին ունի քառակուսի հատակագիծ: Երկու մույթիցը եվ 10 որմնասյունները միացած կամարների համում են թաղակապ տանիքը: Կենտրոնի համեմատաբար լայն ու բարձր կամարներն իրենց վրա կրում են ութկողանի թմբուկ ունեցող բարձր, սրածայր վեղարով զմբեթր: Որմնասյունները տալիս են որմնակամարներ. կամարների մի մասը սլաքածնիվ է: Դրսից ութկողանի զմբեթի կամարակապ, ներս ընկած հարթությունները ծածկված են տարբեր գույնի շնաբակած բազմաձեղ ներքի մեջ բացվում են շատ նեղ ու երկար լուսամուտներ (նկ. 26):

Հուշարձանն արեւելյան կողմից ունի արսիդ՝ մեծադիր բեմով, որի երկու կողմերում կա մեկական խորան: Շենքը ներսից սլաքած է կրաշաղաղիմանկարներ են՝ կրոնական բովանդակությամբ. կան նաև՛ զարդանկարներ: Արեւելյան պատի մեջ, դրսի կողմից կան երկու խորշեր: Հուշարձանը չորանակող եվ վերելվում, պատի մեջ ունեն պարզ ձեվով փորված խաչեր:

Հուշարձանն ունի երկու գլխավոր դռներ, որոնցից մեկը բացված է արեւմտայն, իսկ մյուսը հարավային կողմից: Դռների կողերը շարված են սըրսական շքեղ զարդաքանդակներով:

Մուտքի դռների առջև կառուցված են գավիթներ, որոնք դիմացից ունեն կամարակապ լայն բացվածքներ, իսկ մյուս կողերից պատերն ունեն սլաքածնիվ կամարներով մեծ խորշեր: Հուշարձանը կանգուն է եվ ամբողջական, մասամբ թափված են տանիքի սալաքարերը:

Կիրանց վանքի մյուս 2 եկեղեցիները գտնվում են գլխավոր եկեղեցուն կից, նրա հարավային ել հյուսիսային կողմերում: Դրանք կառուցված են գլխավոր եկեղեցու ձեւով՝ աղյուսից: Հարավային կողմի եկեղեցին փոքր է, հյուսիսային կողմից պատ շունի, այլ գլխավոր եկեղեցուն կից ձգվում են որմնասյուներ, որոնք տալիս են որմնակամարներ: Միակ դուռն արեւմտյան կողմից է ել բացվում է սրահի մեջ: Հուշարձանն ավերակ է, մնում են միայն պատերի ստորին մասերը:

Հյուսիսային կողմի եկեղեցու շենքը նույնպես փոքր է—գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին կից, որը հանդիսանում է կից եկեղեցու հարավային պատը: Միակ դուռն արեւմտյան կողմից է. արեւելյան ել արեւմուտյան պատերի մեջ կա մեկական լուսամուտ. տանիքը թաղակապ է:

Սեղանատունը Կիրանց վանքի կարեւոր հուշարձաններից մեկն է. գտնվում է գլխավոր եկեղեցու արեւմտյան կողմում. կառուցված է տարբեր մեծութեան ավազաքարերից ել գետաքարերից — կրաշագանակով. քարերն արտաքուստ փոքր ինչ հարթված են: Շենքն ունի թաղակապ տանիք: Թաղը կապած է անմշակ, կտպիտ քարերից, բայց ել այնպես այդ ընդարձակ սրահը մնացել է միանգամայն անփաստ:

Միակ դուռն արեւելքից է: Սրահը լավ լուսավորում են հարավային ել արեւելյան կողմերից բացված 3-ական մեծ լուսամուտները: Լուսամուտները ել դռան եզրերն ու քիվերը (կարնիզները) անդեղիտ սրբատաշ քարերից են: Շենքը ներսից սվաղված է կրաշագանակով, որը մեծ մասամբ թափված է: Մնացած մասերի վրա երկվում են որմնանկարների հազիվ նկատելի հետքեր: Սեղանատան ընդարձակությունը վկայում է Կիրանց վանքի կրոնական միաբանության բազմամյա լուսամուտյան մասին:

Սեղանատան արեւմտյան կողմում գտնվում են վանքի միաբանության խոհանոցը ել երկու մեծ գոմերը:

Հուշարձանների խմբի հարավային կողմում պահպանվել են վանական միաբանության բնակելի ել այլ շենքերի մնացորդները: Գլխավոր հուշարձանի արեւելյան կողմում գտնվում է գերեզմանատունը, որի տապանաքարերը բնական սալ քարերից ու մեծ գետաքարերից են ել մեծ մասամբ թաղված են հողի տակ:

Ամբողջ հուշարձանը շրջափակված է պարիսպներով, որը գտնվում է ավերակ վիճակում: Արեւմտյան կողմից բացվում է մուտքի դուռը՝ մեծ, կամարակապ դարպասով, որի առջեւ կա քարաշեն մեծ սրահ:

Իր ճարտարապետական արվեստի ել գործադրված շինանյութերի տեսակետից Կիրանց վանքը բացառիկ արժեք ունի. մասնավանդ արժեքավոր են հուշարձանի ներսի որմնանկարները: Պատմական աղբյուրները հիշատակություն չունեն Կիրանց վանքի մասին, ուստի ել ստույգ հայտնի չէ, թե երբ ել ով է կառուցել հուշարձանը: Մասնագետների կարծիքով այն պետք է կառուցված լինի 13—14-րդ դարերում:

Գ Ե Ղ Ե Ն Ո Ւ Տ Ի Վ Ա Ն Բ

Դեղջնուտի վանքի մասին պատմական աղբյուրներում գեեեվս ոչ մի հիշատակություն չի գտնվել, ուստի նրա կառուցման ել անցյալի պատմությունը մեզ անհայտ է: Գտնվում է Գետաշենից մոտ 15 կիլոմետր դեպի հարավ - արեւմուտք, անտառի խորքում՝ Դեղջնուտ դաշտամասում: Հուշարձանը բաղկացած է երկու եկեղեցուց ել մեկ ժամատան շենքերից. շուրջը տարածվում է բնակատեղի ել գերեզմանատուն: Դեղջնուտի վանքն իր ճարտարապետական ու քանդակագործական արվեստով Մակարավանքից հետո, երկրորդ հուշարձանն է Իջեվանի շրջանում:

Գլխավոր եկեղեցու շենքը կառուցված է մուգ վարդագույն մաքուր տաշված մեծ քարերից: Չորս կիսասյունները միանում են կիսաշրջանաձևով կամարներով, որոնց վրա հանդուժ է գմբեթը. վերջինիս թմբուկը գլանաձևով է, մեկտարը՝ ամբողջապես քանդված է: Արեվելյան կողմից ունի արսիդ — բարձր բեմով, որի 2 կողմերում կան կրկնահարկ խորաններ: Ստորին հարկի խորանների դռները բացվում են դեպի արեվմուտք — եկեղեցու մեջ, իսկ վերինի հարկի խորանները՝ արսիդի մեջ, իրար հանդեպ: Արսիդի պատերի մեջ կան կամարակապ խորշեր՝ սալակախիտ քանդակներով: Միակ դուռը դեբսից եզերվում է ճոխ եվ բարդ քանդակներ ունեցող շրջանակով (նկ. 27, 28):

Դռան ճակատակալ քարի վրա փորված է մի խաչ, որը պատած է բուսական ու երկրաչափական նուրբ քանդակներով: Դռան վերեվի լուսամուտք նույնպես եզերվում է շրջանակներով:

Հարավային, հյուսիսային եվ արեվելյան պատերի մեջ արտաքին կողմից կան 2-ական երկար խորշեր, որոնց վերեվի կամարակապ մասը դարձրված է սալակախիտ քանդակներով (նկ. 31): Այդ պատերի կենտրոններին, անմիջապես կիսակոր հաստ ցոկոլի վրայից, ձգվում են զույգ կիսակոր որմնասյուներ, որոնք սասիճանավոր թեքումներով շրջանցելով խորշերը, ձգվում են դեպի լուսամուտքները եվ կողքերում կազմում խաչեր:

Հուշարձանը գտնվում է կիսավեր վիճակում: Հուշարձանի կառուցման ժամանակն ստույգ հայտնի չէ, բայց իր կառուցման ոճից ելնելով, կարելի է համարել 13-րդ դարի գործ:

Ժամատունը գտնվում է գլխավոր եկեղեցուն կից, նրա արեվմուտյան կողմում. կառուցված է միեւնույն սրբատաշ քարերից: Առանց սյուների է. յուրաքանչյուր պատին կից ձգվում է 2-ական որմնասյուն, հանդիպակապ որմնասյուները միանում են կամարներով, որոնք անկյուններում խաչաձևովում են, տանիքի կենտրոնում կազմելով ցածր գմբեթը:

Հուշարձանը բնորոշ է իր ճարտարապետական կառուցվածքով — կամարակապ կոնստրուկցիայով (նկ. 29):

Հուշարձանն ունի երեք դուռ, որոնցից գլխավորը բացվում է արեվմուտյան կողմից եվ զարդարված է քանդակազարդ շրջանակներով. երկրորդը սիսային կողմից: Հուշարձանը սալահատակած է, տանիքը սրատած է հյուսիս քարերով. հարավային կողմից ունի երկու լուսամուտ, որոնք իրարից բաժանվում են ամբողջական մի սյունով:

Հուշարձանն ունի 13-րդ դարի մի քանի նվիրատվական արձանագրություններ:

Հուշարձանի ներսում, արեվելյան պատի տակ, դռան հյուսիսային կողմում կա պատվանդանից ընկած մի մեծ, գեղաքանդակ խաչքար, որի վրա կարձանագրություն:

Մյուս եկեղեցու շենքը գտնվում է հուշարձանների խմբի հյուսիսային կողմում, կառուցված է պարզ ձևով: Հատակը հողից է եվ նկատվում է, որ տակություններ չունի, բայց, հավանաբար, 17-րդ դարի կառուցվածք է:

Հուշարձանի հյուսիսային կողմում նկատելի են մի քանի գերեզմաններ՝ ծածկված են. կան եվ բնակարանների հետքեր:

Դեղջյուտ հուշարձանին մոտիկ, Գետաշենի յայլանները տանող ճանապարհի եզրին, նկատվում են անբրակ մատուռի հիմնապատեր եվ մատուռին կից՝ գերեզմանատուն, վերջինիս տապանաքարերը բնական սալ քարերից են. գերեզմանոցում երկվում են խաչքարերի փոքրիկ պատվանդաններ:

Մամանի վանքը դառնում է Գետաշեն գյուղից մոտ 20 կիլոմետր դեպի հարավ - արեւմուտք, անտառի խորքում, համանուն դաշտամասում: Խմբական հուշարձան է, բաղկացած է 2 եկեղեցուց եվ մի մատուռից — կից ունի դերեղմանատուն, շուրջը տարածվում է հին բնակատեղի:

Մամսոնի վանք անունը ժողովրդական ծագում ունի, իսկ թե ինչ է եղել պատմական անունը, հայտնի չէ: Պատմական աղբյուրներում այս հուշարձանի մասին ոչ մի հիշատակություն չկա:

Գլխավոր եկեղեցու շենքը կառուցված է մոխրագույն ավազաքարի փոքր-ինչ տաշած մեծ քարերից: Երկու շարք 2-ական կիսասյունները միանում են կամարներով, որոնք իրենց վրա կրում են ութկողանյա թմբուկ ունեցող զբմբեթը: Միակ դուռն արեւմտյան կողմից է. արեւելյան կողմից ունի արսիդ մեծ բեմով, ներսից սվաղած է կրաշաղախով, որը մեծ մասամբ թափված է. սվաղի մնացած մասերի վրա նկատվում են որմնանկարների մնացորդներ. որմնանկարները կրոնական բովանդակություն ունեցող դիմանկարներ են:

Հուշարձանը վերելի մասում խաչաձևի է. խաչթիվերի արանքների բաց տարածությունները հետազայում շարել, հասցրել են տանիքի հավասարությունը եվ, այսպիսով, փակել խաչաձևիությունը: Հուշարձանը թեև կանգուն է, սակայն դառնում է սաստիկ խարտուղ վիճակում: Իր կառուցման ոճով այս հուշարձանը նույնպես մինչև 13-րդ դարի գործ է:

Մյուս եկեղեցու շենքը դառնում է վերջինիս հյուսիսային կողմում, հիմնովին ավերակ է. երեւում է, որ կառուցված է եղել ավազաքարի եվ տեղական լուծաքարի մանր քարերից — կրաշաղախով. արեւելյան կողմում նրկատվում են արսիդի հետքեր. արսիդի 2 կողմերում դրսից կա մեկական խորան:

Մատուռի շենքը գտնվում է գլխավոր եկեղեցու հարավային կողմում. փոքր է եվ սրբատաշ: Մուտքն արեւմտյան կողմից է՝ շրջանակով: Արեւելյան կողմում ունի արսիդ՝ փոքր բեմով: Տանիքը թաղակապ է. ունի զբավոր հիշատակություններ, որոնք սակայն կիսով չափ եղծված են: Հուշարձանը, որ կառուցված է գլխավոր եկեղեցու հետ միաժամանակ, այժմ ավերակ է — մնում են արեւելյան ու հյուսիսային պատերն ամբողջությամբ եվ հարավային ու արեւմտյան պատերի մի մասը:

Գերեզմանատունը տարածվում է հուշարձանի արեւմտյան կողմում, որի տապանաքարերը, հողով ծածկված լինելու պատճառով, չեն երեւում: Պահպանվել են մի քանի խաչքարերի պատվանդանները միայն, որոնք նույնպես կիսով չափ թաղված են հողի մեջ:

Մամսոնի վանք հուշարձանի շուրջը տարածվում է համանուն գյուղատեղին, որից աննշան հետքեր են երեւում դար ու փոսերի ձեւով: Հուշարձանին կից պահպանվել են վանական միաբանության ավերակ բնակարանների հիմնապատերը:

66549 / 134599



Մ Ր Վ Ե Ղ Ի Վ Ա Ն Ք

Մրվելի վանքը գտնվում է Ուզունթալա գյուղից մոտ 3 կիլոմետր դեպի հարավ - արևմուտք, անտառի խորքում, բնդարձակ սարահարթի վրա (նկ. 30): Խմբական հուշարձան է, բաղկացած 2 եկեղեցուց եվ կից օժանդակ այլ շինություններից. պարսպապատ է, շուրջը տարածվում է մի հին ավերակ գյուղատեղի:

Վանքի գլխավոր եկեղեցին հայտնի է ս. Նշան անունով (նկ. 32): Կենտրոնական գմբեթավոր սիստեմի կառուցվածք է՝ հիմնված երկշար 2-ական որմնասյուների վրա: Հիմնապատերը շարված են մուգ վարդագույն անդեզիտի տաշած քարերից, իսկ մնացած մասը՝ թրծած աղյուսից — կրաշաղաշ խով: Որմնասյուները միանում են սլաքածեղ կամարներով, որոնք իրենց վերաբով: Հուշարձանն արեվելյան կողմում ունի արսիդ՝ բարձր ու սրածայր կողմերում կրկնահարկ խորաններ, որոնք արեվելյան կողմից ունեն փոքր արսիդներ եվ մեկական փոքր լուսամուտ: Վերելի հարկի խորանների դռները բացվում են արսիդի մեջ, ուր բարձրանում են քարե սանդուխքով:

Հուշարձանն ունի 7 լուսամուտ, որոնցից մեկը բացվում է արեվմտյան կողմից: Արեվմտյան եվ հյուսիսային կողմից ունի դռներ, որոնցից վերջինը փակված է: Ներսը ավազած է կրաշաղախով. հյուսիսային կողմի վերին խորանից մի գաղտնի անցք պատերի միջով տանում է դեպի տանիքի տակը: Կատարված են մի շարք վերանորոգումներ եվ որոշ մասերի հիմնական վերակառուցումներ: Պատերի մեջ դրված են քանդակազարդ եվ արձանազրված այժմյան հուշարձանի տեղում հնում եղել է մի ուրիշ քարաշեն հուշարձան: Այս հուշարձանը հավանաբար կառուցված է 13—14-րդ դարերում:

Ենթի մոտ 19-րդ դարում կառուցվել է մի եկեղեցի՝ փայտածածկ, որն ալժամ ամբողջովին փլված է: Պատերի մեջ դրված են հին խաչքարերի քանդատ երեկույթին հին, գերեզմաններ՝ մեծ տապանաքարերով: Մկրտություն անշուք շենքը կառուցված է եղել 1889 թվականին, ոմն Հովհաննես քահանայի կողմից:

Հուշարձանների խումբը շրջափակված է պարիսպով, որի հիմնապատերն են միալն մնացել: Պարսպի ներսում նկատվում են վանական միաբանության բնակելի եվ այլ շենքերի հետքերը: Պարսպից դուրս, արեվմտյան կողմում մնացել են վանքի ձիթհանի ավերակ շենքի հիմնապատերը, որոնք կառուցված են տեղական խոշոր լեռնաքարերից: Խմբի շուրջ կավե խողովակներով բերվել է հարավային կողմում գտնվող լեռներից:

Մարտ-ձորն կամ Մովսիսի վանք — Գտնվում է Մովսիս գյուղում. խաչա-
 ձեւով հատակագիծ ունեցող փոքրիկ կառուցվածք է, շինված մոխրագույն բա-
 դալտի տաշած քարերից — կրաշաղախով: Խիստ շեշտված հին պայտածեւ
 կամարների վրա հանդուս է գլանաձեւի թմբուկ ունեցող դմբեթը: Արեւմուտ-
 յան խաչքիւն ուղղանկյուն է, որտեղից բացվում է հուշարձանի մուտքը, իսկ
 մյուս խաչքիւնը, որոնց մեջ բացվում է մեկական լուսամուտ՝ կիսաշրջանա-
 ձեւով են, 4 լուսամուտներ էլ բացվում են դմբեթի մեջ. խորան շունի. բեմը
 շատ ցածր է: Տանիքը եւլ գմբեթն ամբողջապես վերակառուցված են: Հու-
 շարձանը կառուցվել է 7-րդ դարում եւլ վերակառուցվել 13-րդ դարում: Ծն-
 թագրվում է, որ հուշարձանն անկրկն է արաբական արշավանքների ժամա-
 նակ: Վանքը հարուստ է վիմական արձանագրութւոններով, որոնք վերաբե-
 րում են նովիրատութւոն: Արձանագրութւոնների մեջ արժեքավոր են վրաց
 Գեորգի թագաւորի արձանագրութւոնը, որով նա վանքն ազատում է բոլոր
 հարկերից եւլ նոր կալվածքներ նովիրում, ինչպես եւլ սպասալարների տոհմի
 անանաւոր գեմքերի նովիրատւական արձանագրութւոնները: Հուշարձանի շուր-
 ջը տարածվում է պատմական Մովսիս անկրակ գյուղատեղին, որտեղ այժմ հիմ-
 նրվել է Նոր Մովսիս գյուղը: Հուշարձանին կից կան մի շարք գերեզմաններ:
 Մովսիսը Իջեւլանի շրջանի կանգուն մնացած միակ հուշարձանն է 7-րդ դարից,
 որի հիւն մասերը խիստ ուշագրայ . են իրենց քանդակներով ու ձեւերով:

Ի Ջ Ե Վ Ա Ն

1. Բաղնիք. — Գտնվում է Իջևվանից 10 կիլոմետր հեռու, Դիլիջան տանող խճուղու եզրին, Աղստեղ գետի ձախ ափին, ավերակ վիճակում: Կառուցված է թրծած աղյուսից, ամուր կրաշաղախով, շուրջը նկատվում են բնակավայրի հետքեր: Հավանական է, որ այստեղ է գտնվել հնագույն քարվանսատունը, որի անունով ել հետադաշում գյուղը կոչվում էր Քարվանսարա:

2. Մոլլա-ղայա. — Միջնադարի փոքրիկ բերդ է, այժմ ավերակ, գտնվում է Իջևվան գյուղից 10 կիլոմետր հեռու, Դիլիջան տանող խճուղու եզրին ձգվող լեռան գագաթին:

3. Ներքին Գանաղաւն — Միջնադարի ավերակ գյուղատեղի է, տարածվում է Կրդ-Կալա ամրոցի շուրջը — սարալանջին. գյուղատեղում մնում են շենքերի հիմնապատերը եւ փողոցների հետքեր:

4. Վերին Գանաղաւն — Միջնադարի ավերակ գյուղատեղի է, որտեղ կան ավերակ եկեղեցու շենքի հիմնապատեր եւ փոքրիկ գերեզմանոց. տարածվում է Կրդ-Կալա ամրոցից 5 կիլոմետր դեպի արեւմուտք, համանուն դաշտամասում:

5. Չարդախլու. — Ավերակ գյուղատեղի է, նյութական կուլտուրայի մնացորդները վերաբերվում են X—XIII դարերին. տարածվում է մոտ 3 կիլոմետր դեպի հյուսիս-արեւմուտք՝ համանուն դաշտամասում:

6. Աստվածածին. — ս. Սարգիս — Չարդախլու խաչ. փոքրիկ քարաշեն, թաղակապ տանիքով եկեղեցի է. շուրջը տարածվում վանդաններ եւ եկեղեցու արեւմտյան պատի տակ մի մեծ խաչքար: պատգեցու շենքը, ըստ կառուցման ոճի, պատկանում է 11—12-րդ դարերին. գտնվում է Չարդախլու գյուղատեղում:

7. Խոզմարագ. — Ավերակ գյուղատեղի է, տարածվում է Իջևվան գյուղից մոտ 7 կիլոմետր արեւելք, անտառի մեջ՝ համանուն դաշտամասում: Երբով: Արեւմտյան պատի տակ ընկած է խաչքարի շենք՝ թաղակապ տաբեկոր, շուրջը տարածվում է գերեզմանատուն՝ բնական սալ քարից պատրաստված տապանաքարերով:

8. Կամուրջ. — Գտնվում է Իջևվան գյուղից մոտ 9 կիլոմետր հեռու, Դիլիջան տանող խճուղու մոտ, Աղստեղ գետի վրա. գետի ափին պահպանվել են կամրջի շնչին մասերը:

9. Ավերակ գյուղատեղի. — Գտնվում է Իջևվանից մոտ 6 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք՝ Խաչի-Թալա կոչվող դաշտամասում: Գյուղատեղում կան եկեղեցի, գերեզմանատուն, խաչքարձաններ, ձիթհան՝ բոլորն էլ ավերակ վիճակում:

10. Ս. Հովնանենս.— Եկեղեցի՝ Իջեման գյուղից մոտ 2 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք՝ համանուն դաշտամասում, շուրջը տարածվում է ավերակ բնակատեղի:

11. Տաճնուտ.— Ավերակ գյուղատեղի. տարածվում է Իջեման գյուղից մոտ 10 կիլոմետր դեպի արեւմուտք, Տանձուտ կոչվող դաշտամասում: Գյուղատեղում կա մի եկեղեցու շենք եւ 2 գերեզմանոց:

12. Սպիտակաեղջի.— Եկեղեցու շենք է, կից ունի գերեզմանատուն. գտնվում է գյուղից մոտ 8 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք:

13. Գանիելի խաչ.— Եկեղեցի. գտնվում է գյուղից մոտ 6 կիլոմետր դեպի հյուսիս-արեւելք, եւ մի ավերակ մատուռ: Գտնվում է գյուղից մոտ 9 կիլոմետր դեպի հարավ, Աղստեմ գետի աջ ափի սարալանջին, Քյարսի ջիւղ-ձալ» դաշտամասում:

Վ Ե Ր Ի Ն Ա Ղ Գ Ա Ն

1. Վանք — Կրկնահարկ եկեղեցի է, ավերակ վիճակում, որին կից կան շենքերի ավերակներ: Շուրջը տարածվում է ավերակ գյուղատեղի, որտեղ կան գերեզմանատուն, եւ մի ավերակ մատուռ: Գտնվում է գյուղից մոտ 9 կիլոմետր դեպի հարավ, Աղստեմ գետի աջ ափի սարալանջին, Քյարսի ջիւղ-ձալ» դաշտամասում:

2. Հին գյուղատեղի — Տարածվում է Վ. Աղզանից մոտ 12 կիլոմետր դեպի հարավ, Աղստեմ գետի ափին «Գեղատեղ» դաշտամասում. գյուղատեղում կա գերեզմանատուն՝ ավերակ վիճակում:

